науки с производством (развитие заводского сектора науки—«мозговых центров» предприятий, реализация преимуществ промышленных, производственных, научно-производственных объединений, специализированных объединений по внедрению новой техники, комплексных НИИ, учебно-научно-производственных комплексов, развитие и совершенствование связи академических и отраслевых научных учреждений, а также вузов с производственными предприятиями), которые обеспечивают ускоренные темпы научно-технического прогресса и на его основе—значительное повышение эффективности общественного производства.

Вместе с тем в работе недостаточно полно освещены вопросы экономического стимулирования ускорения внедрения достижений науки и техники, информационного обеспечения научных организаций. Недостаточно четко определено место всесоюзных промышленных объединений в комплексной системе управления научно-техническим прогрессом и выделены его функциональные особенности. Дискуссионны отдельные положения. В целом же монография является полезной и несомненно представляет интерес с точки зрения совершенствования взаимосвязи науки и производства.

ГАРИК ХАЧАТРЯН
доктор экономических наук

ԳԱԼՈՒՍՏ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Ա, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1979, 540 էջ։

Հայտնի է, որ հայ մատենագրության հրատարակման կենտրոններ են եղել Վենետիկը, Վիեննան, Կոստանդնուպոլիսը, Թիֆլիսը, Վաղարշապատը, Ս. Պետերբուրգը, Մոսկվան և այլն, որոնց տպարաններից դուրս են եկել հայերեն բազմաթիվ գրքեր։

Հայտնի է նաև, որ գրքի արժեքն է՛լ ավելի է մեծանում, երբ այն ունենում է գիտական հրատարակություն։ XX դ. սկզբներին հայ առանձին մատենագիրների երկերի գիտական հրատարակության գործում մեծ գեր են խաղացել հայագիտության երախտավորներ Մ. Արեղյանը, Ս. Մալխասյանը և ուրիշներ։ Նրանց շարքում իր պատվավոր տեղն ունի նաև նշանավոր հայագետ Գայուստ Տեր-Մկրտչյանը (1860—1918), որի անունը մինչև վերջերս մեր գիտական հասարակայնության նեղ շրջանին էր հայտնի միայն։ Շատերն են ծանոթ նրա՝ Ագաթանգեղոսի (Տփղիս, 1909) և Ղազար Փարպեցու (Տփղիս, 1904) երկերի քննական բարձրորակ հրատարակություններին, ընդ որում, առաջինը՝ Ս. Կանայանցի, իսկ երկրորդը՝ Ս. Մալխասյանի աշխատակցությամբ։ Բայց Գ. Տեր-Մկրտչյանի հայագիտական աշխատությունները քչերին են հայտնի։ Եվ դա այն պատճառով, որ դրանք տպագրվել են իր ժամանակի հանդեսներում, հիմնականում «Արարատում» և շուտով մոռացվել են։ Եվ ահա Երևանի համալսարանի հայագիտական հետազոտությունների կենտրոնը, հանդես բերելով շնորհակալ նախաձեռնություն, հրատարակում է Գ. Տեր-Մկրտչյանի հայագիտական ուսումնասիրությունները երկու հատորով։ Արդեն ընթերցողի սեղանին է առաջին գիրքը, որը կազմել և խմբագրել են Պ. Հակոբյանը և Է. Պիվազյանը, ընդ որում գրքի առաջաբան և ծանոթագրությունները գրել է Պ. Հակոբյանը։ Առաջին գրքում զետեղված են 21 աշխատություններ, որոնք նվիրված են հայ մատենագրության պատմության, բնագրագիտության, վիմագրության, դրամագիտության, տեղագրության, բանահյուսության և այլ բնագավառների ուսումնասիրությանը։

Գ. Տեր-Մկրտչյանը ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել է Էջմիածնի այն ժամանակվա Մատենադարանի ձեռագրային հավաքածուները (3000 հատորից ավելի) և նոր ստացվող ձեռագրերը։ Ցնայած գիտնականը դժգոհում է իր կատարած աշխատանքից, բայց հարկ է նշել, որ այն տվել է լավ արդյունք։ «Խոստովանում եմ,— գրում է Գ. Տեր-Մկրտչյանը,— որ եթե իմ այդչափ թարթափումներս հենց սկզբից կենտրոնացած լինեին մի որոշ շրջանի և կամ մատենագրի վրա, թերևս ստանայի ավելի դրական հետևանքներ և գիտության համար ավելի շոշափելի արդյունք։ Բայց իմ մեջ գերակշռեցին՝ նախապես հին մատենագրության ամբողջության հետ (ընդգծումն իրենն է—Գ. Թ.) ծանոթանալու բուռն փափագը և մասնավորով զբաղվելուց առաջ ընդհանուրին վրա մի թեթև հայացք ձգելու հետաքրքրությունը» (էջ 298)։

Ձեռագրերի հետ ծանոթանալիս նա հայտնաբերել է մի շարք մին՝ այդ անհայտ կամ անծանոթ աշխատություններ։ Բավական է ասել, որ նա է հայտնաբերել հետագայում՝ 1921 թ., Շապուհ Բագրատունու անունով հրատարակված մատյանը։

Գ. Տեր-Մկրտչյանին ամենից շատ հետաքրքրել են հայ մատենագրության հանգուցային հարցերը։ Նրա հետազոտությունների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում Մովսես Խորենացու պրոբլեմը։ «Խորենացու Պատմության ուսումնասիրությունը», «Խորենացու ժամանակը որոշելու նոր փորձ», «Հայկականք» աշխատություններում Գ. Տեր-Մկրտչյանը, համադրելով տարբեր ձեռագրեր ու բնագրեր, հայտնել է մի շարք կարևոր դրույթներ Մովսես Խորենացու անձի ու պատմության վերաբերյալ, կատարել բազմաթիվ արժեքավոր սրբագրություններ և ցույց տվել Մովսես Խորենացու ազդեցությունը նրան ժամանակակից և հետագա մատենագիրների վրա։ Նա հանգամանորեն ուսումնասիրել է Ագաթանգեղոսի, Ղազար Փարպեցու և Փավստոս Բուզանդի աղբյուրներն ու ձեռագրերը։ Այստեղ ևս նա արել է բազմաթիվ սրբագրություններ, որոնք տեղ են գտել տվյալ երկերի հրատարակությունների մեջ։ Հիշտ է, նրա մոտ կան նաև սխալ և անընդունելի տեսակետներ. օրինակ՝ նա Կորյունին և Ագաթանգեղոսին նույնացնում է, Մովսես Խորենացուն համարում է VII դ. հեղինակ և այլն, այնուամենայնիվ, նրա ուսումնասիրությունները ամբողջությամբ վերցրած ունեն գիտական մեծ արժեք։

Հայ գրերի 1500-ամյակի առթիվ գրած նրա հոդվածը, որն իր ժամանակին բարձր է գնահատվել Լենինի կողմից, այսօր էլ չի կորցրել իր նշանակությունը։

«Արմավիրյան նոր բևեռագիր», «Մարդարապատի բևեռագրերի վերծանությունը», «Ուրարտյան բևեռագրերի լեզուն», «Նստոց... հինգ նոր արձանագրություն», «Աջից ձախ հայ դրություն» հոդվածները վկայում են Գ. Տեր-Մկրտչյանի կատարած հնագիտական և վիմագրական աշխատանքների մասին։

«Գարագաշյանի Քննական հայոց պատմությունը» աշխատության մեջ Գ. Տեր-Մկրտչյանը արժեքավոր մտքեր է հայտնում հայ ժողովրդի կազմավորման մասին և իրավացիորեն դժգոհում է Ա. Գարագաշյանից այն բանի համար, որ նա իր պատմությունը գրել է ժողովրդին անհասկանալի լեզվով՝ գրաբարով։

Գ. Տեր-Մկրտչյանը հայտնաբերել և ուսումնասիրել է, կցելով արժեքավոր առաջարաններ ու ծանոթագրություններ, Անանիա Նարեկացու «Գիր խոստովանութեանը», Անանիա Մոկացու խղթերը, Անանիա Շիրակացու տիեզերագիտական աշխատությունները, խնդրադիրքը և այլն։

Տքնաջան գիտնականին զբաղեցրել են նաև հայ բանահյուսության հարցերը։ Հեթանոսական կրոնից մնացած ժողովրդական սովորությունների և կրոնական հավատալիքների մասին նրա գրած հոդվածները պատմագիտական մեծ նշանակություն ունեն։ Նա գրել է առանձին ծառերի, արմատների, ծաղիկների, ջրի, աստղերի պաշտամունքի մասին։ Հետազոտության հատուկ առարկա է դարձրել Վիճակի երգերը՝ «Ջան գյուլումները», որոնց թիվն անցնում է 500 քառյակից։ «Ծաթերի մասին» փոքրիկ հոդվածում հայագետն ապացուցում է, որ ծաթերը նույն գնչուներն են, հայ բոշաները։

Ընթերցողը այս և բազմաթիվ այլ հարցերի մասին կարող է հանգամանորեն ծանոթանալ, եթե կարդա Գ. Տեր-Մկրտչյանի «Հայագիտական ուսումնասիրություններ» դիրքը։

Գիտական կարևոր արժեք են ներկայացնում գրքի առաջարանն ու ծանոթագրությունները։ Առաջաբանում ըստ արժանվույն գնահատված է Գ. Տեր-Մկրտչյանի գիտական ժառանգությունը։ Բայց Պ. Հակոբյանի կատարած բարեխիղճ գիտական աշխատանքը երևում է հատկապես նրա գրած ծանոթագրություններից, որոնք կազմում են շուրջ երեք մամուլ։ Ծանոթագրություններն ընթերցելիս պարզվում է, որ Պ. Հակոբյանը մանրազնին կերպով ուսումնասիրել է Գ. Տեր-Մկրտչյանի աշխատությունների ձեռագրերն ու տպագիր օրինակները, նշել դրանց տպագրության պատմությունը, բերել ժամանակակից հայագետների կարծիքները նրա առանձին հոդվածների կամ դրույթների վերաբերյալ և, օգտվելով նամակներից ու այլ աղբյուրներից, տվել լրացուցիչ այլ բացատրություններ ու պարզաբանումներ, որոնք էլ ավելի են բարձրացնում գրքի գիտական արժեքը։

ԳԵՎՈՐԳ ԹՈՍՈՒՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու